## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկունք համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Ծաղկունք, 4-74-88, tsaghkunq.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 ՀՈՒԼԻՍԻ 2018թվականի N 19

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 3-Ի ԹԻՎ 06 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի վեցերորդ մասով, 17-րդ հոդվածով՝ համայնքի ավագանին.

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկունք համայնքի ավագանու 2018 թվականի հուլիսի 3-ի թիվ 06 արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՄԻՐՋԱՆՅԱՆ ԱՆԳԻՆ
2. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ
3. ԵՐԱՆՈՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ
4. ԵՐԱՆՈՍՅԱՆ ՀԱՅԿ
5. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՄԵԼԻՔ
6. ՍԱՀԱԿՅԱՆ ԱԼԻԿ
7. ՎԱՐԴԱՆՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկունք համայնքի ավագանու
2018 թվականի հուլիսի 3-ի N 06 արտահերթ նիստի թիվ 19 որոշման

# ՕՐԱԿԱՐԳ

## ԹԻՎ 06 ՆԻՍՏԻ

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 3-Ի ԹԻՎ 06 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:
2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ:
3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՌԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ:
4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ <ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ> ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:
5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ:

Աշխատակազմի քարտուղար Լ. Մամիկոնյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկունք համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Ծաղկունք, 4-74-88, tsaghkunq.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ՀՈՒԼԻՍԻ 2018թվականի N 20

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆԱՐՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 37-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2018 թվականի հունիսի 27-ի թիվ 01/02.1/2363-18 գրությունը, համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին.

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկունք համայնքում իրականացված վարչական հսկողության արդյունքներում արձանագրված խախտումների վերացման ուղղությամբ ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ հետագայում դրանք բացառելու համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՄԻՐՋԱՆՅԱՆ ԱՆԳԻՆ
2. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ
3. ԵՐԱՆՈՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ
4. ԵՐԱՆՈՍՅԱՆ ՀԱՅԿ
5. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՄԵԼԻՔ
6. ՍԱՀԱԿՅԱՆ ԱԼԻԿ
7. ՎԱՐԴԱՆՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկունք համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Ծաղկունք, 4-74-88, tsaghkunq.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 ՀՈՒԼԻՍԻ 2018թվականի N 21

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՌԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ 23-ի թիվ 656-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին.

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկունք համայնքի 2018 թվականի հուլիսի 1-ի դրությամբ կազմված հողային հաշվեկշռին՝ համաձայն հաշվետվություն NN22, 22ա-ի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՄԻՐՋԱՆՅԱՆ ԱՆԳԻՆ
2. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ
3. ԵՐԱՆՈՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ
4. ԵՐԱՆՈՍՅԱՆ ՀԱՅԿ
5. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՄԵԼԻՔ
6. ՍԱՀԱԿՅԱՆ ԱԼԻԿ
7. ՎԱՐԴԱՆՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՇԽՄԱՆ ԱՌ 01.07.2018 Թ.

Մարզ՝ Արմավիր (անվանում) 4 (Կոդ *)

Համայնք՝ Ծաղկունք (անվանում) 276 (Կոդ *)

*(հեկտարներով)*

| NN | Նպատակային նշանակություն | Հողատեսք, գործառնական նշանակություն | Կոդի NN | Ընդամենը (2+3+4+8+12) | Սեփականության սուբյեկտ: ՀՀ քաղաքացիների | ՀՀ իրավաբանական անձանց | համայնքային: ընդամենը (5+6+7) | համայնքային: 5 | համայնքային: 6 | համայնքային: 7 | պետական: ընդամենը (9+10+11) | պետական: 9 | պետական: 10 | պետական: 11 | 12 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ա | Բ | Գ | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 |
| 1.1 | 1. Գյուղատնտեսական | վարելահող | | 153.76 | 131.10 | | 22.66 | | 20.69 | 1.97 | | | | | |
| 1.2 | | բազմամյա տնկարկներ | | 5.70 | 5.70 | | | | | | | | | | |
| 1.2.1 | | այդ թվում՝ պտղատու այգի | | 3.00 | 3.00 | | | | | | | | | | |
| 1.2.2 | | խաղողի այգի | | 2.70 | 2.70 | | | | | | | | | | |
| 1.2.3 | | այլ բազմամյա | | | | | | | | | | | | | |
| 1.3 | | խոտհարք | | | | | | | | | | | | | |
| 1.4 | | արոտ | | 39.34 | 38.40 | | 0.94 | | | 0.94 | | | | | |
| 1.5 | | այլ հողատեսքեր | | 31.55 | 20.94 | | 10.60 | | | 10.60 | | | | | |
| 1 | | Ընդամ (1.1+1.2+1.3+1.4+1.5) | | 230.35 | 196.14 | | 34.20 | | 20.69 | 13.51 | | | | | |
| 2.1 | 2. Բնակավայրերի | բնակելի կառուցապատման | | 78.06 | 78.06 | | | | | | | | | | |
| 2.1.1 | | այդ թվում՝ տնամերձ հողեր | | 78.06 | 78.06 | | | | | | | | | | |
| 2.1.2 | | այգեգործական (ամառ-ն) | | | | | | | | | | | | | |
| 2.2 | | հասարակական | | 4.29 | 0.72 | | 2.57 | | | 2.57 | 1.00 | | | 1.00 | |
| 2.3 | | խառը կառուցապատման | | | | | | | | | | | | | |
| 2.4 | | ընդհանուր օգտագործման | | 18.55 | | | 18.55 | | | 18.55 | | | | | |
| 2.5 | | այլ հողեր | | 10.23 | | | 10.23 | | | 10.23 | | | | | |
| 2 | | Ընդամե (2.1+2.2+2.3+2.4+2.5) | | 111.13 | 78.78 | | 31.35 | | | 31.35 | 1.00 | | | 1.00 | |
| 3.1 | 3. Արդյունաբերության, ընդերքօգտագործման | արդյունաբերական օբյեկտներ | | 1.49 | 0.28 | 1.21 | | | | | | | | | |
| 3.2 | | գյուղատնտե արտադրական | | 14.65 | 0.13 | | 14.52 | | | 14.52 | | | | | |
| 3.3 | | պահեստարանների | | 2.65 | 0.60 | | 2.05 | | | 2.05 | | | | | |
| 3.4 | | ընդերք օգտագործման | | | | | | | | | | | | | |
| 3 | | Ընդամենը (3.1+3.2+3.3+3.4) | | 18.79 | 1.01 | 1.21 | 16.57 | | | 16.57 | | | | | |
| 4.1 | 4. Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, | էներգետիկայի | | 1.16 | | | 0.02 | | | 0.02 | 1.14 | | | 1.14 | |
| 4.2 | | կապի | | | | | | | | | | | | | |
| 4.3 | | տրանսպորտի | | 4.38 | | | | | | | 4.38 | | | 4.38 | |
| 4.4 | | կոմունալ ենթակառուցվածք | | 0.21 | | | 0.21 | | | 0.21 | | | | | |
| 4 | | Ընդամենը (4.1+4.2+4.3+4.4) | | 5.75 | | | 0.23 | | | 0.23 | 5.52 | | | 5.52 | |
| 5.1 | 5. Հատուկ պահպանվող տարածքների | բնապահպանական | | | | | | | | | | | | | |
| 5.1.1 | | այդ թվում՝ արգելոցներ | | | | | | | | | | | | | |
| 5.1.2 | | արգելավայրեր | | | | | | | | | | | | | |
| 5.1.3 | | ազգային պարկեր | | | | | | | | | | | | | |
| 5.2 | | առողջարարական | | | | | | | | | | | | | |
| 5.3 | | հանգստի | | | | | | | | | | | | | |
| 5.4 | | պատմական և մշակութային | | 3.87 | | | 2.22 | | | 2.22 | 1.65 | | | 1.65 | |
| 5 | | Ընդամենը (5.1+5.2+5.3+5.4) | | 3.87 | | | 2.22 | | | 2.22 | 1.65 | | | 1.65 | |
| 6 | 6. [illegible] | Ընդամենը | | 1.13 | | | | | | | 1.13 | | | 1.13 | |
| 7.1 | 7. Անտառային | անտառ | | | | | | | | | | | | | |
| 7.2 | | թփուտ | | | | | | | | | | | | | |
| 7.3 | | վարելահող | | | | | | | | | | | | | |
| 7.4 | | խոտհարք | | | | | | | | | | | | | |
| 7.5 | | արոտ | | | | | | | | | | | | | |
| 7.6 | | այլ հողեր | | | | | | | | | | | | | |
| 7 | | Ընդամենը (7.1+7.2+7.3+7.4+7.5+7.6) | | | | | | | | | | | | | |
| 8.1 | 8. Ջրային | գետեր | | 6.39 | | | | | | | 6.39 | | | 6.39 | |
| 8.2 | | ջրամբարներ | | | | | | | | | | | | | |
| 8.3 | | լճեր | | 2.90 | | | 2.90 | | | 2.90 | | | | | |
| 8.4 | | ջրանցքներ | | 1.18 | | | 1.18 | | | 1.18 | | | | | |
| 8.5 | | հիդրոտեխ և ջրտնտ այլ օբյեկ | | 1.01 | | | | | | | 1.01 | | | 1.01 | |
| 8 | | Ընդամ (8.1+8.2+8.3+8.4+8.5) | | 11.48 | | | 4.08 | | | 4.08 | 7.40 | | | 7.40 | |
| 9.1 | 9. Պահուստային | աղուտներ | | | | | | | | | | | | | |
| 9.2 | | ավազուտներ | | | | | | | | | | | | | |
| 9.3 | | ճահիճներ | | | | | | | | | | | | | |
| 9.4 | | | | | | | | | | | | | | | |
| 9.5 | | այլ անօգտագործելի հողեր | | | | | | | | | | | | | |
| 9 | | Ընդամ (9.1+9.2+9.3+9.4+9.5) | | | | | | | | | | | | | |
| | ԸՆԴԱՄԵՆԸ ՀՈՂԵՐ (1+2+3+4+5+6+7+8+9) | | | 382.6 | 275.9 | 1.21 | 88.65 | | 20.69 | 67.96 | 16.70 | | | 16.70 | |

Համայնքի ղեկավար
Կ.Տ.

(ստորագրություն)

Կատարող

(ստորագրություն)

Ձև N 22ա

# Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՌՈԳՎՈՂ ՀՈՂԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՇԽՄԱՆ (ԸՍՏ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ՀՈՂԱՏԵՍՔԵՐԻ ԵՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ)

Մարզ՝ Արմավիր (անվանում) — 4 (Կոդ *)

Համայնք՝ Ծաղկունք (անվանում) — 276 (Կոդ *)

(հեկտարներով)

| NN | Նպատակային նշանակություն | Գործառնական նշանակություն, հողատեսք | կոդ N/N | Ընդամենը ոռոգվող հողեր (2+3+4+5+6) | Սեփականության սուբյեկտ: ՀՀ քաղաքացիների | ՀՀ իրավաբանական անձանց | համայնքային | պետական | Օտարերկրյա պետությունների |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ա | Բ | Գ | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1.1 | 1. Գյուղատնտեսական | վարելահող | | 153.76 | 131,1 | | 22,66 | | |
| 1.2 | | բազմամյա տնկարկներ, ընդամենը | | 5.70 | 5.70 | | | | |
| 1.2.1 | | այդ թվում՝ պտղատու այգի | | 3.00 | 3.00 | | | | |
| 1.2.2 | | խաղողի այգի | | 2.70 | 2.70 | | | | |
| 1.2.3 | | այլ | | | | | | | |
| 1.3 | | խոտհարք | | | | | | | |
| 1.4 | | արոտ | | | | | | | |
| 1.5 | | այլ հողատեսքեր | | | | | | | |
| 1 | | Ընդամենը (1.1+1.2+1.3+1.4+1.5) | | 159.46 | 136.8 | | 22.66 | | |
| 2.1 | 2. Բնակավայրերի | բնակելի կառուցապատման | | 71.0 | 71.0 | | | | |
| 2.1.1 | | այդ թվում տնամերձ հողեր | | 71.0 | 71.0 | | | | |
| 2.1.2 | | այգեգործական (ամառանոցային) | | | | | | | |
| 2.2 | | ընդհանուր օգտագործման | | | | | | | |
| 2.3 | | այլ հողեր | | | | | | | |
| 2 | | Ընդամենը (2.1+2.2+2.3) | | 71.0 | 71.0 | | | | |
| 3 | 3. Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների | | | | | | | | |
| 4 | 4. Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների | | | | | | | | |
| 5 | 5. Հատուկ պահպանվող տարածքների | | | | | | | | |
| 6 | 6. Հատուկ նշանակության | | | | | | | | |
| 7.1 | 7. Անտառային | անտառ | | | | | | | |
| 7.2 | | թփուտ | | | | | | | |
| 7.3 | | վարելահող | | | | | | | |
| 7.4 | | խոտհարք | | | | | | | |
| 7.5 | | արոտ | | | | | | | |
| 7.6 | | այլ հողեր | | | | | | | |
| 7 | | Ընդամենը (3.1+3.2+3.3+3.4+3.5+3.6) | | | | | | | |
| 8 | 8. Ջրային | | | | | | | | |
| 9 | 9. Պահուստային | | | | | | | | |
| | ԸՆԴԱՄԵՆԸ ՈՌՈԳՎՈՂ ՀՈՂԵՐ (1+2+3+4+5+6+7+9) | | | 230.46 | 207.80 | | 22.66 | | |

Համայնքի ղեկավար՝ (ստորագրություն)

Կ.Տ.

Կատարող՝ (ստորագրություն)

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկունք համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Ծաղկունք, 4-74-88, tsaghkunq.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ՀՈՒԼԻՍԻ 2018թվականի N 22-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ <ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ> ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին.

ՈՐՈՇՈՒՄ Է .

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա քաղաքացիներին <Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկունք համայնքի պատվավոր քաղաքացի> կոչում շնորհելու կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՄԻՐՋԱՆՅԱՆ ԱՆԳԻՆ
2. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ
3. ԵՐԱՆՈՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ
4. ԵՐԱՆՈՍՅԱՆ ՀԱՅԿ
5. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՄԵԼԻՔ
6. ՍԱՀԱԿՅԱՆ ԱԼԻԿ
7. ՎԱՐԴԱՆՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Ծաղկունք համայնքի ավագանու
2018 թվականի հուլիսի 3-ի N06 արտահերթ
նիստի թիվ 22-Ն որոշման

# ԿԱՐԳ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ <ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ> ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ

1. Սույնով սահմանվում է Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա քաղաքացիներին /հետագայում՝ քաղաքացիներ/ <Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկունք համայնքի պատվավոր քաղաքացի> կոչում շնորհելու կարգը:
2. <Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկունք համայնքի պատվավոր քաղաքացի> կոչումը պատվավոր կոչում է՝ նախատեսված <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքով:
3. <Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկունք համայնքի պատվավոր քաղաքացի> կոչումը շնորհվում է Արմավիրի մարզի Ծաղկունք համայնքի ավագանու կողմից, համայնքի ղեկավարի առաջարկությամբ՝ սույն կարգին համապատասխան:
4. <Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկունք համայնքի պատվավոր քաղաքացի> կոչմանը կարող է արժանանալ անկախ ազգությունից, սեռից, ռասսայից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, գույքային և այլ դրույթներից, այն քաղաքացիները, որոնք իրենց երկարամյա անբասիր աշխատանքով և /կամ/ բացառիկ մեծ վաստակով նպաստել են Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկունք համայնքի բարգավաճմանը, ակնառու ներդրում ունեն համայնքի տնտեսական, մշակութային զարգացման գործում, իրենց կյանքում ու անցած ուղիով նպաստել են ժողովրդի բարեկամության և խաղաղության հաստատմանը, անուրանալի ավանդ ունեն մշակույթի, արվեստի, գրականության կամ գիտական զարգացման բնագավառում:
5. <Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկունք համայնքի պատվավոր քաղաքացի> կոչում շնորհելու գրավոր առաջարկով կարող են հանդես գալ Հայաստանի Հանրապետությունում գրանցված հասարակական միավորումները, հիմնադրամները, իրավաբանական անձանց միությունները, հասարակության լայն զանգվածները և մշակութային, կրթական, գիտական կազմակերպությունները, Հայ Առաքելական եկեղեցին, պետական կառավարման մարմինները, որոնք պարտավոր են հիմնավորել իրենց առաջարկը, համակողմանիորեն լուսաբանել <Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկունք համայնքի պատվավոր քաղաքացի> կոչմանը ներկայացվող քաղաքացու կյանքը, գործունեությունը, ներկայացնել համապատասխան նյութեր և քաղաքացու լուսակարը:
6. Ստացված առաջարկությունները ներկայացվում են Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկունք համայնքի ղեկավարին:
7. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկունք համայնքի ղեկավարի առաջարկությամբ համայնքի ավագանին որոշում է ընդունում <Հայաստանի

Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկունք համայնքի պատվավոր քաղաքացի> կոչում շնորհելու մասին:

8. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկունք համայնքի պատվավոր քաղաքացուն հանդիսավոր պայմաններում հանձնվում է <Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկունք համայնքի պատվավոր քաղաքացի> կոչում շնորհելու վերաբերյալ համայնքի ավագանու որոշումը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկունք համայնքի պատվավոր քաղաքացու վկայականը:
9. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկունք համայնքի պատվավոր քաղաքացու անունը գրանցվում է Ծաղկունքի համայնքապետարանում պահվող, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկունք համայնքի պատվավոր քաղաքացիների հաշվառման հատուկ գրքում:
10. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկունք համայնքի պատվավոր քաղաքացուն հանձնվող վկայականի և հաշվառման հատուկ գրքի ձևերը հաստատում է համայնքի ավագանին:
11. <Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկունք համայնքի պատվավոր քաղաքացի> կոչում շնորհելու մասին համայնքի ավագանու որոշումը և համայնքի պատվավոր քաղաքացու կյանքը և գործունեությունը պարտադիր լուսաբանվում է զանգվածային լրատվության միջոցներով:
12. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկունք համայնքի ավագանու որոշումներով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկունք համայնքի պատվավոր քաղաքացիների համար կարող են սահմանվել արտոնություններ:

Աշխատակազմի քարտուղար Լուսինե Մամիկոնյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկունք համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Ծաղկունք, 4-74-88, tsaghkunq.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 ՀՈՒԼԻՍԻ 2018թվականի N 23

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 92-րդ հոդվածի առաջին մասով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասով՝ համայնքի ավագանին.

### ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկունք համայնքի 2018 թվականի բյուջեի երկրորդ եռամսյակի կատարման ընթացքի մասին համայնքի ղեկավարի ներկայացրած հաղորդումն ընդունել ի գիտություն՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՄԻՐՋԱՆՅԱՆ ԱՆԳԻՆ
2. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ
3. ԵՐԱՆՈՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ
4. ԵՐԱՆՈՍՅԱՆ ՀԱՅԿ
5. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՄԵԼԻՔ
6. ՍԱՀԱԿՅԱՆ ԱԼԻԿ
7. ՎԱՐԴԱՆՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Ծաղկունք համայնքի ավագանու 2018 թվականի
հուլիսի 3-ի N 06 նիստի թիվ 23 որոշման

# ՀԱՂՈՐԴՈՒՄ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

*ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ* հազար դրամ

| | Եկամուտների տեսակները | Տարեկան պլան | Հաշվետու ժամանակաշրջան | | |
|---|---|---|---|---|---|
| | | | Հաշվարկային պլան | Փաստացի | Տոկոս |
| 1 | հողի հարկ | 5.300.0 | 2.650.0 | 1.006.4 | 37.9 |
| 2 | գույքահարկ շինության | 1.441.1 | 720.5 | 452.5 | 62.8 |
| 3 | գույքահարկ փոխադրամիջոցի | 5.800.0 | 2.900.0 | 717.5 | 24.7 |
| 4 | տեղական տուրք | 398.0 | 198.9 | 240.0 | 120.6 |
| 5 | տեղական վճար | 1.114.0 | 557.0 | 400.3 | 71.8 |
| 6 | դոտացիա | 19.292.0 | 9.646.0 | 9.646.0 | 100.0 |
| 7 | վարձակալական h/հարկ | 460.0 | 230.0 | 30.0 | 13.0 |
| *ԸՆԴԱՄԵՆԸ* | | 33.805.1 | 16.902.4 | 12.492.7 | 73.9 |

Տարեսկզբի ազատ մնացորդն ընդամենը 16.081.6 հազ. /տասնվեց միլիոն ութսունմեկ հազար վեց հարյուր/ դրամ, 2018 թվականին հողի օտարումից մուտքագրվել է 5.984.3 հազ /հինգ միլիոն ինը հարյուր ութսունչորս հազար երեք հարյուր/ դրամ եկամուտ:

*ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐ* հազար դրամ

| | Ծախսերի տեսակները | Տարեկան պլան | Հաշվետու ժամանակաշրջան | | |
|---|---|---|---|---|---|
| | | | Հաշվարկային պլան | Փաստացի | Տոկոս |
| 1 | կառավարման ապարատ | 23.590.0 | 11.795.0 | 8.957.6 | 75.9 |
| 2 | ընդհանուր բնույթի համայնքային ծառայություն | 2.770.0 | 1.385.0 | 600.0 | 43.3 |
| 3 | մշակույթ, սպորտ, կրոն | 1.941.1 | 970.5 | 750.0 | 77.2 |
| 4 | աղբահանություն | 1096.0 | 547.9 | 498.0 | 90.8 |
| 5 | սոցիալական ապահովություն | 2.500.0 | 1.250.0 | 1.250.0 | 100 |
| 6 | գյուղատնտեսություն | 260.0 | 130.0 | - | - |
| 7 | պահուստային ֆոնդ | 1.648.0 | 824.0 | - | - |
| *ԸՆԴԱՄԵՆԸ* | | 33.805.1 | 16.902.4 | 12.055.6 | 71.3 |

2018 թվականի երկրորդ եռամսյակի ընթացքում ֆոնդային բյուջեի ծախս չի կատարվել: